Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երեւան 16 փետրվարի 2009թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 2-րդ դատական կազմը նախագահությամբ՝ Հ.Նազարյանի, անդամակցությամբ՝ Հ.Դանիելյանի եւ Ռ.Պապայանի, քննության առնելով << քաղաքացի Ռուբեն Թորոսյանի կողմից ներկայացված դիմումի ընդունելիության հարցը

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Քաղ. Ռուբեն Թորոսյանը դիմել է Սահմանադրական դատարան՝ (10.02.2009թ. մտից թիվ 4-43) վիճարկելով «Սահմանադրական դատարանի մասին» << օրենքի 29 եւ 38 հոդվածների 2-րդ մասերով, 69 հոդվածի 6-րդ մասի վերջին նախադասությամբ եւ 10-րդ մասով սահմանված դրույթների սահմանադրականությունը:

Միաժամանակ, դիմողը միջնորդել է ազատել իրեն պետական տուրք վճարելու պարտականությունից՝ «Պետական տուրքի մասին» << օրենքի 22 հոդվածի «ժդ» կետի հիմքով:

2. «Սահմանադրական դատարանի մասին» << օրենքի 69 հոդվածի 1-ին մասի համաձայն դիմումատուն պետք է հիմնավորի իր կողմից վիճարկվող նորմերը («Սահմանադրական դատարանի մասին» << օրենքի 29 եւ 38 հոդվածների 2-րդ մասեր, 69 հոդվածի 6-րդ մասի վերջին նախադասություն եւ 10-րդ մաս) կոնկրետ գործով <u>իր նկատմամբ</u> կիրառվելու հանգամանքը՝ <u>ընդհանուր իրավասության եւ մասնագիտացված դատարաններում գործը լուծող վերջնական դատական ակտի հիման վրա,</u> որպիսի ապացույց դիմողը չի ներկայացրել: Բայի այդ, «Սահմանադրական դատարանի մասին» << օրենքի 27 հոդվածի պահանջներին համապատասխան, նույն օրենքի 69 հոդվածում նշված գործերով, դիմողը <u>պարտավոր է վճարել պետական տուրք</u>, որպիսի պահանջը դիմողը չի կատարել:

3. Սահմանադրական դատարանի 2-րդ դատական կազմն անհրաժեշտ է համարում կրկին նշել, որ իր որոշումներով (23.01.2009թ., 03.02.2009թ., 05.02.2009թ., 11.02.2009թ.) մերժելով քաղ. Ռ.Թորոսյանի համանման հիմնավորումներով դիմումների (08.01.2009թ. մտից թիվ 4-1, 16.01.2009թ. մտից թիվ 4-6, 16.01.2009թ. մտից թիվ 4-8, 30.01.2009թ. մտից թիվ 4-28) քննության ընդունումը, դատական կազմը պարզաբանել է «Սահմանադրական դատարանի մասին» << օրենքի 69 հոդվածի հիմքով ներկայացված դիմումը նույն օրենքի 74 հոդվածի կանոններով քննության ընդունելու, հետեւաբար նաեւ՝ պետական տուրքի վճարումից ազատելու <u>անիրավաչափությունը</u>:

4. Ելնելով վերոշարադրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» << օրենքի 27, 69 հոդվածներով, սահմանադրական դատարանի կանոնակարգի 26 հոդվածի 3-րդ մասով, սահմանադրական դատարանի 2-րդ դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Տ

Քաղաքացի Ռուբեն Թորոսյանի դիմումի քննության ընդունումը մերժել՝ չբավարարելով պետական տուրք վճարելուց ազատելու վերաբերյալ նրա միջնորդությունը:

Նախագահող՝ Հ.Նազարյան

Անդամներ՝ Հ.Դանիելյան

Ռ.Պապայան